



2017թ. սեպտեմբերի 29-ին Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը ԻԿՕՄՕՍ/Հայաստան կազմակերպության հետ Եվրոպական ժառանգության օրերին կմիանա նոր ցուցահանդեսով՝ «Ժառանգությունը և բնությունը. ուրարտական քաղաքները և բնական լանդշաֆտը» խորագրով: Ցուցահանդեսի նպատակն է ընդգծել բնության դերն ու նշանակությունը ուրարտական ժառանգության ստեղծման և պահպանման կարևոր գործում: Ցուցահանդեսը ներկայացնող պատկերազարդ տեղեկատվական պաստառներում ընդգրկված են մի շարք ուրարտական բնակավայրեր, որոնց օրինակով ցուցադրված են բնության մեջ ուրարտական քաղաքների տեղադրության առանձնահատկությունները, բնական լանդշաֆտի ճիշտ օգտագործման, պահպանության և ռազմավարական խնդիրների համադրության սկզբունքները, ինչպես նաև ուրարտացիների կողմից ջրանցքների, արհեստական լճերի, կամուրջների կառուցման նշանակությունը գյուղատնտեսության զարգացման գործում:

Առանձին պաստառներով ներկայացված են ուրարտական սեպագիր արձանագրություններում տեղ գտած տեղեկությունները արքաների կողմից պարտեզներ, խաղողուտներ ստեղծելու ավանդույթի, ուրարտացիների կրոնական ընկալումներում գոյություն ունեցող բնության աստվածների մասին: Սեպտեմբերի 29-ին «Էրեբունի» թանգարանում Եվրոպական ժառանգության օրերի խորհուրդն ազդարարող խոսքերով հանդես կգան ժառանգության ոլորտի մի խումբ գործիչներ: Ցուցահանդեսի դիտումից հետո ժառանգության փոքրիկ պահապանների՝ մի խումբ դպրոցականների համար ճանաչողական էքսկուրսիա կանցկացնեն «Էրեբունի» թանգարանի «Պատանի հնագետ» դպրոցի շրջանավարտները: Համաեվրոպական օրերի շրջանակում կազմակերպված «Ժառանգությունը և բնությունը. ուրարտական քաղաքները և բնական լանդշաֆտը» խորագրով ցուցահանդեսի բացումը տեղի կունենա 2017թ. սեպտեմբերի 29-ին, ժամը 14:00-ին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում:

Ցուցահանդեսը կգործի մինչև 2017թ. հոկտեմբերի 29-ը: